



ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ








ՅՈՒՆԻԲԱՆԿ

Միջանկյալ հաշվետվություն

4-րդ եռամսյակի

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Մեսրոպ Հակոբյան	Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն	12.02.2020	
Արարատ Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ	12.02.2020	
Գոհար Գրիգորյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ	12.02.2020	
Օվսաննա Առաքելյան	Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն	12.02.2020	
Դավիթ Պետրոսյան	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	12.02.2020	
Գուրգեն Ղուկասյան	Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	12.02.2020	
Արթուր Ապերյան	Վարչության անդամ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն	12.02.2020	

Ներածություն

Յունիբանկ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնես արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար
- Հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը

Որպես հաշվետու թողարկող

Յունիբանկ ԲԲԸ-ի կառավարման մարմնի միջանկյալ զեկույցը

Ակտիվները կազմել են 252.4 մլրդ դրամ՝ աճելով 42.6 մլրդ դրամով՝ նախորդ ֆինանսական տարվա վերջի ցուցանիշի համեմատ: Վարկային ներդրումները կազմել են 141.8 մլրդ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 56.2%-ը: Պարտավորությունների ծավալը կազմել է 218.9 մլրդ դրամ՝ աճելով 41.7 մլրդ դրամով նախորդ ֆինանսական տարվա վերջի ցուցանիշի համեմատ:

Պարտավորությունները հաճախորդների նկատմամբ կազմել են 190 մլրդ դրամ՝ աճելով 38.5 մլրդ դրամով նախորդ տարվա վերջին ցուցանիշի համեմատ: Վերջինս հիմնականում ապահովվել է իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ միջոցների հաշվին:

Բանկի կապիտալը

Կապիտալի համարժեքության նորմատիվը դեկտեմբերին կազմել է 14.57%՝ աճելով 0.19 տոկոսային կետով, ռիսկով կշռված ակտիվների աճի հաշվին: Կապիտալի համարժեքության ցուցանիշը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն մակարդակը (12%): 31.12.2019թ. դրությամբ նորմատիվային կապիտալը կազմել է 30.9 մլրդ. դրամ:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու տարում Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 18,952,347 հազ. ՀՀ դրամ:

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան (01.01.2019- 31.12.2019) (հազ. ՀՀ դրամ)	Նախորդ ժամանակաշրջան (01.01.2018- 31.12.2018) (հազ. ՀՀ դրամ)
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	573,782	424,925
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	17,141,049	12,784,498
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	1,185,792	887,452
Տոկոսային եկամուտ 'Ռեպո' պայմանագրերից	4,221	
Տոկոսային եկամուտ մինչև մարման ժամկետը պահվող պետական տոկոսային արժեթղթերից	805	805
Ֆակտորինգից ստացված եկամուտներ		
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեզրկված տոկոսներ		
Այլ տոկոսային եկամուտներ	46,698	33,120
Ընդամենը	18,952,347	14,130,800

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան (01.01.2019- 31.12.2019) (հազ. ՀՀ դրամ)	Նախորդ ժամանակաշրջան (01.01.2018- 31.12.2018) (հազ. ՀՀ դրամ)
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	(541,335)	(430,030)
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	(7,670,360)	(5,673,667)
Տոկոսային ծախսեր 'Ռեպո' պայմանագրերի դիմաց	(145,891)	(137,184)

Տոկոսային ծախսեր ածանցյալ գործիքներից	(13,238)	(11,828)
Տոկոսային ծախսեր կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց	(548,479)	(408,496)
Կառավարության վարկեր	(277,962)	(194,240)
Ֆինանսական լիզինգ	(182,110)	(89,441)
Այլ տոկոսային ծախսեր		
Ընդամենը	(9,379,375)	(6,944,886)

Զուտ շահույթը 12 ամիսների արդյունքներով կազմել է 1,418,013 հազ ՀՀ դրամ:

Մանրածախ բիզնես

Մանրածախ բիզնեսում Բանկի աշխատանքն ուղղված էր գործիքակազմի կատարելագործմանը, բիզնես գործընթացների օպտիմալացմանը, հաճախորդների հետ հետադարձ կապի ուժեղացման միջոցով սպասարկման որակի բարձրացմանը:

Վարկավորման տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ կենտրոնական բանկի քաղաքականության շրջանակներում Բանկն առաջարկել է հաճախորդներին առավել գրավիչ պայմաններ: Կայուն աճ արձանագրվել է ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման համար սպառողական վարկերի, ոսկու գրավով վարկերի գծով:

Բանկը շարունակել է ֆինանսավորման արժեքի նվազեցման քաղաքականությունը՝ ժամկետային ավանդների համար սահմանելով չափավոր տոկոսադրույքներ:

Կորպորատիվ բիզնես

Միկրո և փոքր բիզնեսի զարգացման ռազմավարությանը համահունչ, 2019թ. 4-րդ եռամսյակի ընթացքում Յունիբանկը շարունակել է ակտիվ քայլերը՝ նպատակաուղղված հիշյալ սեգմենտի համար վարկային միջոցների հասանելիության բարձրացմանը: Կենտրոնանալով թիրախային սեգմենտների վրա՝ կորպորատիվ բիզնեսի ստորաբաժանման ջանքերն ակտիվորեն ուղղված էին շինարարության, սպասարկման ոլորտների, այդ թվում հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի ֆինանսավորմանը:

Հայաստանի Հանրապետությունում կանանց ձեռներեցության աջակցման նպատակով FMO Հոլանդական զարգացման բանկի հետ դեռևս 2018թ. ընթացքում կնքվել էր վարկային ռեսուրսների տրամադրման պայմանագիր, որի շրջանակներում Յունիբանկին տրամադրվել էր 5 մլն ԱՄՆ դոլար, նախատեսվում է 2-րդ տրանշը ստանալ հուլիսին 5 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Սպասարկման ցանց, հաճախորդային բազա

31.12.2019թ-ի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 51 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, 93 պրոմո կետ, 125 բանկոմատ, 142 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը:

Տարվա ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 348.000 հաճախորդների:

Դրամական փոխանցումների սպասարկման ոլորտում շարունակվում է նկատվել ծավալների չնչին փոփոխություն, ինչը պայմանավորված է բանկի միջոցով ստացվող ֆիզիկական անձանց միջազգային ոչ առևտրային փոխանցումների համանման ծավալներով:

2020թ. ռազմավարական առաջնահերթությունները

Բանկի ղեկավարության կողմից սահմանվել են 2020թ. զարգացման հետևյալ առանցքային առաջնահերթությունները՝

- ✓ գործիքակազմի և մատուցվող ծառայությունների ընդլայնում և կատարելագործում, բարձր եկամտաբեր ուղղությունների զարգացում,
- ✓ քարտային բիզնեսի զարգացում,
- ✓ հաճախորդների որակյալ սպասարկման ապահովում, հեռահար սպասարկման ուղիների զարգացում,
- ✓ մասնաճյուղային ցանցի ընդլայնում բիզնեսի համար առավել հեռանկարային քաղաքներում և շրջաններում,
- ✓ տեխնոլոգիական բազայի մոդերնիզացում,
- ✓ Ռուսական ֆոնդային շուկա դուրս գալը,
- ✓ ֆինանսական արդյունավետության ապահովում և բանկային համակարգում Յունիբանկի դիրքի բարելավում, Բանկի ներդրումային գրավչության բարձրացում:
- ✓ Հաճախորդների միջազգային վճարումների գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով Բանկը ընդլայնում է թղթակցային հարաբերությունների ցանցը առաջատար արտասահմանյան բանկերի հետ:
- ✓ Պլանավորման առաջին տարում Բանկի հիմնական խնդիրները հետևյալն են.
- ✓ 2020թ. ակտիվների և պարտավորությունների ծավալը հասցնել համապատասխանաբար 283 և 246 մլրդ դրամի, որոնք ենթադրում են տոկոսային աճ համապատասխանաբար 15.6% և 16.8%, վարկային պորտֆելի աճ՝ 14.9 մլրդ դրամով կամ 10.8% (առաջնահերթ խնդիր է համարվում եկամտաբեր ակտիվների կշռի բարձրացումը ընդհանուր ակտիվներում), որից բիզնեսի պորտֆելի ծավալի աճ 4.1 մլրդ դրամով կամ 6.5 %-ով, մանրածախ բիզնեսի պորտֆելի ծավալի աճ՝ 10.8 մլրդ դրամով կամ 14.3 %-ով,
- ✓ 2020թ. ընթացքում բոլոր բիզնես առաջադրանքներն իրականացնելու արդյունքում բանկն ակնկալում է ապահովել 2,131 մլն դրամի զուտ շահույթ
- ✓ 2020-2022թթ. ընթացքում ապահովել 7-8% կապիտալի եկամտաբերություն
- 2020թ. ընթացքում բացի ծավալային աճի նպատակներից և շուկայում դիրքերի ամրապնդումից բանկի առջև դրված է ամենակարևոր նպատակը՝ վարկային պորտֆելի որակի բարձրացում և չաշխատող ակտիվների գծով լրացուցիչ մասհանումների իրականացում
- տեղաբաշխել պարտատոմսեր արտարժույթով 10 մլն դոլարի չափով
- ընդլայնել մասնակցությունը միջազգային վարկավորման ծրագրերում, հատկապես Եվրոպական Ներդրումային Բանկի ծրագրի շրջանակներում և արդեն իսկ հոլանդական FMO ընկերության հետ համագործակցության շրջանակներում՝ 'Կանայք բիզնեսում' ծրագրով ՓՄՁ վարկավորման ընդլայնում
- բարձրացնել սպասարկման որակը, հատկապես մոբայլ բանկինգի ամբողջական գործարկմամբ,
- ապահովել կորպորատիվ կառավարման սկզբունքները,
- կատարելագործել ներքին հսկողության համակարգերը, ներքին կանոնակարգումը և աշխատանքի գնահատման ցուցանիշների համադրումը բանկի ընդհանուր նպատակների հետ
- Պլանավորվող ժամանակաշրջանում բանկը բացի վերը նշված հիմնական ցուցանիշներն ապահովելու խնդրից իր առջև դրել է նպատակ բանկի ընդհանուր ներդրումների ծավալային աճը ապահովել իր գործունեության հիմնական բիզնես ուղղություններով և վարկային պորտֆելի գծով: Ինչպես նշված է ծրագրում բանկի հիմնական

նպատակներից է հանդիսանում համասեռ և դիվերսիֆիկացված վարկային պորտֆելի ձևավորումը, որը հնարավոր միմիայն ՓՄՁ վարկերի ծավալների ընլայնման և դրանց կշռի մեծացման հաշվին ընդհանուր վարկային պորտֆելում, ինչպես նաև մանրածախ բիզնեսի զարգացման հաշվին:

Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Բացարձակ արժեքով ներկայացված ցուցանիշներն արտահայտված են հազ. ՀՀ դրամով:

	2016թ. (աուդիտ անցած)	2017թ. (աուդիտ անցած)	2018թ. (աուդիտ անցած)	2019թ. (աուդիտ չանցած)
Ցուցանիշի անվանումը				
Զուտ շահույթ շահութահարկի	-443,218			

գծով ծախսի նվազեցումից հետո		67,602	931,297	1,418,013
Սեփական կապիտալի միջին մեծություն	29,704,263	35,334,279	33,176,713	33,099,180
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	-1.5%	0.2%	2.8%	4.3%
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-443,218	67,602	931,297	1,418,013
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	174,248,544	191,844,966	199,485,446	227,531,058
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	-0.3%	0.0%	0.5%	0.6%
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-443,218	67,602	931,297	1,418,013
Գործառնական եկամուտ	10,831,503	13,454,274	14,762,553	15,671,003
Ջուտ շահույթի մարժա (NPM), %	-4.1%	0.5%	6.3%	9.0%
Գործառնական եկամուտ	10,831,503	13,454,274	14,762,553	15,671,003
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	174,248,544	191,844,966	199,485,446	227,531,058
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	6.2%	7.0%	7.4%	6.9%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	174,248,544	191,844,966	199,485,446	227,531,058
Սեփական կապիտալի միջին մեծություն	29,704,263	35,334,279	33,176,713	33,099,180
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.87	5.43	6.01	6.87
Ջուտ տոկոսային եկամուտ	8,361,044	10,491,356	10,518,060	9,572,972
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	131,429,702	148,972,966	151,855,857	167,314,905
Ջուտ տոկոսային մարժա (NIM)	6.4%	7.0%	6.9%	5.7%
Տոկոսային եկամուտ	21,329,971	22,296,742	20,008,220	18,952,347
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	131,429,702	148,972,966	151,855,857	167,314,905
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	16.2%	15.0%	13.2%	11.3%
Տոկոսային ծախսեր	12,968,927	11,805,386	9,490,160	9,379,375

Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	142,975,618	154,817,860	164,735,879	191,815,032
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	9.1%	7.6%	5.8%	4.9%
Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-443,218	67,602	931,297	1,418,013
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	163,963,708	203,732,963	204,896,525	204,896,525
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-2.7	0.3	4.5	6.9
Սպրեդ	7.2%	7.3%	7.4%	6.4%

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը

Այսօր Յունիբանկը ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկի էտրիդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը:

2019թ.-ի հոկտեմբերի 1-31-ը Յունիբանկը իր ArCa Classic, Visa Classic և Busines քարտապաններին տրամադրել է հնարավորություն VLV Electronics էլեկտրատեխնիկայի խանութների ցանցից գնել ապրանք 3% զեղչով, իսկ Visa Gold և Infinite քարտապաններին՝ 5% զեղչով: Զեղչերը գործել են անգամ ապառիկ ձևակերպելու ժամանակ:

Վերոնշյալին գումարվել են VLV-ում գործող ընդհանուր զեղչերին, սակայն համատեղելի չեն եղել խանութում գործող ակցիաների և հատուկ գների հետ:

2019թ.-ի հոկտեմբերի 14-ին ՅունիՄոբայլ հավելվածի նկատմամբ հաճախորդների պահանջարկի աճով պայմանավորված Բանկը թարմացրեց մոբայլ հավելվածը՝ առաջարկելով նոր հնարավորություններ բանկից դուրս արագ ու հարմարավետ սպասարկվելու համար: Հաճախորդներին հասանելի դարձավ գործարքները կրկնելու գործառույթը, որը հնարավորություն է տալիս մեկ-երկու հպումով կատարել վճարումները: Բացի այդ, հավելվածում ավելացան նոր ծառայություններ. անմիջապես հեռախոսից կարելի է կատարել Յունիստրիմ փոխանցումներ, ինչպես նաև ստուգել կենսաթոշակային հաշվի մնացորդը:

Սեփական պրոցեսինգային կենտրոնի գործարկումը հնարավորություն տվեց Յունիբանկին էապես մեծացնել քարտերի թողարկման ծավալները, բարելավել սպասարկման որակը, ինչպես նաև ընդլայնել քարտային գործիքների տեսականին:

2019թ.-ի նոյեմբերի 27-ին Recognition Award-ի մասնակիցների պարգևատրման ժամանակ Յունիբանկն արժանացավ Visa միջազգային վճարային համակարգի մրցանակին «Largest Visa Issuance in Armenia» անվանակարգում՝ թողարկված քարտերի քանակով Հայաստանում առաջատարը լինելու համար:

2019թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Յունբանկը հասարակությանը աջակցություն ցուցաբերելու նպատակով բժշկական հաստատությունների և SS ու հեռահաղորդակցության ոլորտի աշխատակիցների համար մշակեց հատուկ վարկային քարտեր՝ շահավետ պայմաններով:

Բժշկական հաստատությունների աշխատակիցներին տրամադրվող վարկի գումարը սահմանեց 500 000 - 2 500 000 ՀՀ դրամ, ժամկետը՝ 24 ամիս, երկարաձգման հնարավորությամբ, վարկային գծի տոկոսադրույքը՝ 16% տարեկան, որը հաշվարկվում է միայն օգտագործված գումարի նկատմամբ::

SS և հեռահաղորդակցության ոլորտի աշխատակիցների համար վարկային գծի սահմանաչափը կազմեց մինչև 3 մլն ՀՀ դրամ, տարեկան տոկոսադրույքը՝ 14.4%, որը հաշվարկվում է միայն օգտագործված գումարի նկատմամբ: Վարկը տրամադրվում է 24 ամիս մարման ժամկետով:

2019թ. դեկտեմբերին Յունիբանկը, շարունակելով իրականացնել սահմանամերձ շրջանների դպրոցներին իր աջակցության ծրագիրը, Սիսիանի Շաղատի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը համալրեց նոր մարզագույքով, իսկ մեկ տարի առաջ Բանկի նախաձեռնությամբ բացված ճյուղոյի խմբակի մարզումների համար տրամադրեց տատամի, որի շնորհիվ պարապմունքները դարձան ավելի հարմարվետ ու հաճելի:

Յունիբանկը 10-րդ անգամ թողարկեց և մինչև դեկտեմբերի 15-ը հաջողությամբ տեղաբաշխեց 5.25% տարեկան եկամտաբերությամբ և 1 000 000 ծավալով դոլարային արժեկտրոնային նոր պարտատոմսեր, որոնք ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայի /AMX/ երկրորդային (Bbond) ցուցակում::

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկային հայտերի հաստատման ավտոմատացում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:

Վինտաժային վերլուծությունները, ստրես տեստավորումները, ներքին և արտաքին աուդիտի կողմից կատարվող ստուգումները թույլ են տալիս ժամանակին բացահայտելու և կառավարելու Բանկին բնորոշ ֆինանսական և գործառնական ռիսկերը:

Բանկի կանոնադրական կապիտալը 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 20,489,652,500 ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով և 32,010,000 հատ արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալը արտահայտված է ՀՀ դրամով:

Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Յունիբանկում ռիսկերի կառավարման համակարգն առաջնորդվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ օրենքներով և նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով / Generally Accepted Risk Principles – GARP/, ինչպես նաև հնարավոր է օգտագործվեն Բանկի կողմից ընդունված գնահատման և վերլուծության համար սեփական մեթոդներ, ցուցանիշներ և կառավարման գործիքներ: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար: Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի

բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:

Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում:

Վարկային ռիսկ է համարվում վարկառուի կողմից ստանձնած վարկային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը (վարկի սահմանումը տրված է Բանկի “Վարկային քաղաքականություն”-ում),

Համաձայն բանկի վարկային պորտֆելի ռիսկայնության վերլուծությունների բանկի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը 31.12.2019թ. դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ		
	Ցածր ռիսկ	Միջին ռիսկ		Բարձր ռիսկ
Վարկեր, այդ թվում՝				
1. ՀՀ ռեզիդենտներին	103,446,039	1,248,135		32,385,423
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին	10,632,249			2,303,026
Ընդամենը	114,078,288	1,248,135		34,688,449

Միաժամանակ բանկի վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը:

Վարկերի գծով պահուստաֆոնը/ընդհանուր վարկեր = 9.54 %

Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր = 23.96%

Չաշխատող վարկերի պահուստ/ընդհանուր կապիտալ = 27.82%

Հնարավոր կորուստների հատուկ պահուստ/չաշխատող վարկեր = 36.40%

Շահույթի ծածկման գործակից (զուտ գործառնական եկամուտներ+պահուստի ստեղծման ծախսեր)/վարկերից զուտ կորուստ = 93.41%

Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տկոսային մարժա = 0.5%:

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ սահմանելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր:

Շուկայական ռիսկ է համարվում շուկայական գործոնների (արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Իրացվելիության ռիսկ է համարվում Բանկի կողմից իր պարտատերերի օրինական պահանջները ճիշտ ժամանակին չբավարարման խնդիրների ի հայտ գալու և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Կապիտալի համարժեքության ռիսկ է համարվում ռիսկով կշռված ակտիվների և/կամ ընդհանուր կապիտալի տարրերի փոփոխման պարագայում Բանկի կապիտալի անբավարարության (ոչ համարժեքության) հավանականությունը:

Գործառնական ռիսկ է համարվում Բանկի ներքին կազմակերպչական և/կամ բիզնես գործընթացների խափանման (անձնակազմի ոչ համարժեք կամ ոչ կանոնակարգային գործողություններ, դիտավորությամբ կատարված կամ ոչ միտումնավոր գործարքային սխալներ, գործառնական համակարգերի կամ տեխնոլոգիական բնույթի այլ խափանումներ) կամ տեխնածին բնույթի արտաքին գործոնների ազդեցության արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Իրավական ռիսկ է համարվում Բանկի ներքին իրավական ակտերի, կիրառվող բիզնես գործընթացների, գործիքների, գործարքների, ինչպես նաև վերջիններս կարգավորող պայմանագրերի գործող օրենսդրությանը չհամապատասխանելու և դրա արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Համբավի (հեղինակության) ռիսկ է համարվում հանրության բացասական կարծիքի հետևանքով Բանկի կողմից իր գործող կամ պոտենցիալ հաճախորդներին, գործընկերներին կորցնելու կամ վերջիններիս հետ իրականացվող գործարքների/գործառնությունների ծավալի նվազման հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի համար ֆինանսական կորուստների և/կամ իրացվելիության խնդիրների:

Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ է համարվում Բանկի կողմից ոչ իրատեսական (անհամապատասխան) ռազմավարության ընտրության, ինչպես նաև ընտրված ռազմավարության հիմքում ընկած ենթադրությունների, ցուցանիշների, նպատակների և/կամ այլ գործոնների բացասական փոփոխությունների ի հայտ գալու հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական կորուստների:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգի բաղադրիչներն են՝

Ռազմավարությունը,

Մեթոդաբանությունը,

Վերահսկողությունը,

Արդյունավետության գնահատումը,

Արդիականացումը (անհրաժեշտության դեպքում):

Բանկային ռիսկերի կառավարում է համարվում Բանկի իրավասու մարմինների, ստորաբաժանումների կամ անձանց կողմից այնպիսի գործողությունների

իրականացումը, որը հնարավորություն կընձեռի բանկային ռիսկերի առկայության և անորոշության պայմաններում ապահովել դրական ֆինանսական արդյունք:

ՌԿՀ-ն գործում է անընդհատության սկզբունքով՝ հաշվի առնելով ներքին և արտաքին միջավայրերի դինամիկ փոփոխությունները:

Բանկային ռիսկերի կառավարումն իրականացվում է ուղղահայաց եռաստիճան համակարգով՝

Ռազմավարական մակարդակ՝ ռիսկերի բացահայտում, ընդունելի ախորժակի, գործընթացների և սահմանաչափերի սահմանում,

Վերահսկողական/հսկողական մակարդակ՝ մոնիտորինգ, շեղումների վերլուծություն, գնահատում և համապատասխանեցում,

Մարտավարական մակարդակ՝ ռիսկերի ընթացիկ կառավարում թույլատրելի սահմանաչափերի միջակայքում (ռիսկ պարունակող գործարքների իրականացում):

Բանկային ռիսկերի կառավարման գործընթացի փուլերն են՝

Ռիսկերի բացահայտումը (սահմանումը), ներառյալ ռիսկի գործոնների վերլուծությունը (տարրանջատումը),

Ռիսկերի գնահատման մեթոդների սահմանումը (ըստ տեսակների) և ռիսկերի գնահատումը (կանխատեսումը),

Ռիսկերի սահմանափակումը, այն է՝ դիվերսիֆիկացիայի սկզբունքների, ներքին սահմանաչափերի հաստատումը, ինչպես նաև համապատասխան ներքին իրավական ակտերի մշակումը և ընդունումը, որոնցում, մասնավորապես, ներառվում են բազմակի ստուգման, միևնույն գործընթացի իրականացումը տարբեր, միմյանց հետ չփոխկապակցված անձանց վրա դնելու և սխալների բացահայտման սկզբունքները:

Ռիսկերի գործնական կառավարումը, այն է՝ համապատասխան գործողությունների իրականացումը, իրավիճակային արձագանքումը (խուսափում, նվազեցում/հեջավորում, փոխանցում/ապահովագրություն, ռիսկի ընդունում և այլն),

Ռիսկերի մոնիտորինգը, վերլուծությունը, ընթացիկ (օպերատիվ) և պարբերական հաշվետվությունների/տեղեկատվության տրամադրումը ուղղահայաց և հորիզոնական կտրվածքներով,

Ռիսկերի կառավարման հետգործարքային վերահսկողությունը:

Յուրաքանչյուր ռիսկի տեսակի կառավարման գործընթացը (սահմանաչափերը, կառավարումը, վերահսկողությունը, հաշվետվությունները, պատասխանատուները և այլն) կարգավորվում է համապատասխան կարգերով, ընթացակարգերով:

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող իննովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրաձախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որա՛յալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
- հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

ՄԵՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչություն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


Կորպորատիվ կառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները, Վարկային կոմիտեն և Պահուստների կառավարման Կոմիտեն: Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Խորհրդի որոշմամբ նաև կարող է գումարվել արտահերթ ժողով: Բաժնետերերի ընդհանուր ժողովի ամսաթիվը սահմանում է Խորհուրդը: Բանկը տեղեկացնում է բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մասին՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելով հաղորդագրություն ոչ ուշ, քան 15 օր առաջ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից և 30 օր առաջ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին:

Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ուղղվածության ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմակերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները:

Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին: Ներքին աուդիտն ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

Բաժնետերերի ընդհանուր ժողով



Վարչությանը կից գործող հանձնաժողովներ

Վարչությանը կից գործող հանձնաժողովներն են՝ Սակագների, Ակտիվների և Պարտավորությունների հանձնաժողովը, Մասնաճյուղային ցանցի կառավարման հանձնաժողովը, Բիզնեսի գնահատման հանձնաժողովը, Անվտանգության հանձնաժողովը, Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովը, Անձնակազմի գնահատման հանձնաժողովը:

Ակտիվների և Պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի գործունեության նպատակն է՝

- ակտիվների և պասիվների կառավարումը, դրանց վերլուծությունը և կառուցվածքի արդյունավետության մոնիտորինգը,
- Բանկի իրացվելիության պահանջների բավարարման աղբյուրներն ու օգտագործման ուղիները,
- Բանկի պարտավորությունների և ակտիվների ցանկայի կամ նպատակային կառուցվածքը և ժամկետայնության սահմանները,
- իրացվելի միջոցների առաջնային աղբյուրների սպառման դեպքում այլընտրանքային աղբյուրների ընտրության չափանիշները, դրանց հայթայթման ուղիները,
- ակտիվների և պասիվների կառավարման հետ կապված ներքին լիմիտների և նորմատիվների պահպանման նկատմամբ հսկողությունը,
- տոկոսային մարժայի նպատակային մակարդակը.
- մատուցվող ծառայությունների սակագների տեսակների, սակագների և դրույքաչափերի սահմանման և վերանայման սկզբունքների սահմանումը, դրանք գործողության մեջ դնելու վերաբերյալ Վարչությանը և Խորհրդին առաջարկությունների ներկայացումը: Սակագների վերաբերյալ առաջարկություններ կատարելիս Հանձնաժողովը պետք է հաշվի առնի ծառայությունների ինքնարժեքը, սակագները պետք է ծածկեն ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերը և ապահովեն որոշակի եկամուտ: Բանկի Խորհրդի կողմից հաստատված սակագներից շեղումները անհատական հաճախորդների համար ենթակա են քննարկման Հանձնաժողովում, և յուրաքանչյուր հաճախորդի համար, համաձայն Հանձնաժողովի որոշման, կնքվում են համապատասխան համաձայնագրեր:

Բիզնեսի գնահատման հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի գործունեության նպատակն է՝

- Բանկի պլանային ցուցանիշների և բյուջեի կատարողականների քննարկում,
- Բիզնեսի զարգացման և բիզնես գործընթացի բարելավման նպատակով առաջարկությունների և հանձնարարությունների մշակում,
- Բանկի մասնաճյուղերի արդյունավետ աշխատանքին աջակցում՝ ուղղված դրական ֆինանսական արդյունքների ստացմանը՝ զուգորդելով զարգացման դինամիկայի և հաճախորդների սպասարկման որակի բարձրացմամբ:
- Բանկի մասնաճյուղերի ֆինանսատնտեսական գործունեության պարբերական վերլուծության իրականացում:
- Մասնաճյուղային ցանցի ֆինանսատնտեսական պլանավորման գործընթացի աջակցում, պլանային ցուցանիշների կատարման հսկում, ֆինանսական արդյունքների պարբերական ամփոփում:
- Հանձնաժողովի հանձնարարականների կատարողականների հսկողության իրականացում:

SS և տեղեկատվական անվտանգության հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի գործունեության նպատակն է՝

- SUԿՀ արդյունավետության բարձրացումը,
- SUԿՀ-ին առնչվող ցանկացած փոփոխության քննարկումը,
- Բանկի անվտանգության ապահովման ոլորտում իրականացվող գործունեության կորրեկցումը, անվտանգության ոլորտին վերաբերվող իրավական ակտերի ընդունման գործընթացն առավել արդյունավետ դարձնելը,
- անվտանգության, ներքին ռեժիմի պահպանության այլ հարցեր,
- Բանկի SS և տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացի կազմակերպումը,
- SS և տեղեկատվական անվտանգության քաղաքականության վերլուծություն և հաստատում, ընդհանուր պարտականությունների բաշխում,
- SS և տեղեկատվական ռեսուրսների հիմնական ռիսկերի քննարկում,
- SS և տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված հիմնական մոտեցումների հաստատում:

- SS և տեղեկատվական անվտանգության ոլորտներին առնչվող հարցերի քննարկում և որոշումների ընդունում,
- SS և տեղեկատվական անվտանգության ոլորտների խնդիրների միջոցառումների ծրագրերի հաստատում, SS նախագծերի կատարման ժամանակացույցերի սահմանված ժամկետներում կատարում:

Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի քննարկմանը կարող են ներկայացվել հետևյալ հարցերի վերաբերյալ առաջարկություններ.

- Հաստատված ծախսերի նախահաշվի փոփոխություններ՝ ամսեկան, եռամսյակային, կիսամյակային պլանավորման փոփոխություններ,
- Նախատեսված ծախսային հոդվածների փոփոխություններ,
- Նախատեսված ծախսային հոդվածներում գումարների փոփոխություններ,
- Ծրագրերի փոփոխություն՝ այդ թվում չնախատեսված ծրագրերի ներառում,
- սույն կարգով չնախատեսված այլ հարցեր:

Անձնակազմի գնահատման հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

- Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների և աշխատակիցների կողմից կատարվող աշխատանքների ընթացիկ գնահատում՝ համաձայն կատարված և խորհրդի կողմից հաստատված պլանային ցուցանիշների, ինչպես նաև Բանկի խորհրդի կողմից հաստատված խրախուսման համակարգերի,
- Բանկի աշխատակիցների գիտելիքների և ստորաբաժանումների հետ համագործակցության արդյունավետության գնահատում,
- աշխատանքային վեճերի և կոնֆլիկտների ուսումնասիրություն և լուծում,
- պաշտոնական հետաքննությունների արդյունքների, բողոքների, բացատրությունների, Հանձնաժողովի իրավասության շրջանակներում այլ հարցերի և դեպքերի ուսումնասիրում,
- Բանկի աշխատակիցներին պատասխանատվության երթարկելու վերաբերյալ հարցերի քննարկում և որոշումների ընդունում,
- Բանկի աշխատակիցներին խրախուսելու վերաբերյալ հարցերի քննարկում և որոշումների ընդունում,
- Աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնին համապատասխանության գնահատում,
- Անձնակազմի գնահատման գործող կարգի խախտումներ արձանագրելու դեպքում՝ Բանկի Վարչությանը տեղեկացում,

- հանձնաժողովի հանձնարարականների կատարողականների նկատմամբ հսկողության իրականացում:

Վարկային կոմիտեի գործունեությունը/գործառույթները

- Բանկի վարկային քաղաքականության իրականացում և զարգացում.
- Բանկային ռիսկերի կառավարում.
- Իր իրավասության շրջանակներում Բանկի վարկավորման ընթացակարգերի արդյունավետ ու արագ կազմակերպում և կիրառում:

Պահուստների կառավարման հանձնաժողով

Հաճնաժողովի հիմնական խնդիրներն են՝

- ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին» որոշման համաձայն հսկվող դասակարգված վարկերի պայմանների վերանայումը և ստանդարտ դասի բերելը.
- ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին» որոշման համաձայն ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված վարկերի առողջացման նպատակով դրանց պայմանների վերանայումը և ստանդարտ դասի բերելը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա: